52. ԹԱԳԱՎՈՐԻ ՀՈՒՐԻ ՓԱՐԻ ԱԽՉԻԿՆԵՐ

Կէղնի, չէղնի տղեմ՝ կէղնի, կէլնի հեծնի զուր ձին, կասե.- «Էդա տեխեն պիտի էրթամ տեխըմ, քանիմ՝ ընկեր գտնամ ընծիկ ու մնամ էնտեխ, չիգամ»։

Կքաշե զուր ձին, կիգա սարըմ կէլնի դուրս, քիչըմ տեխ կէրթա, կտեսնա օր քոշքըմ է։ Կիչնի ուր ձիուց, զձին կքաշե ներս, կտեսնա օր հ՝ոդի քառսուն ձի լէ կապուկ կա. կտանե քառսուն ձիու գլուխ զուր ձին կկապե։ Կէլնի վերին դին։ Կտեսնա օր քառսուն մարդ զուրանց սաքոնները հ՝իջուցած ին, կախած պատեն ու ուրանք լէ պառկած քնած. կտանե զուր սաքոն քառսուն ախպոր սաքոններուց վի կկախե ու կիգա պառկի քնի։ Ախպըրտանք կիմնան, կէլնին, կտեսնան օր մարդըմ կա պառկուկ ուրանց գլուխ։

Հ՝իրարու կասին.—Ջանը՛մ, մենք քառսուն ախպեր ենք, էդա մարդ հ՝ո՞ւստեն բուսավ, էկավ, պառկավ մըր գլուխ։

Կէլնին կէրթան ախոռ, կտեսնան օր ձի մը լէ ուրանց ձիանուց վի կա կապուկ։

Հ՝իրարու կասին.—Ցա՛մ էդա մարդ շատ կտրիճ մարդ է՝ էկեր ի պառկի էդա տեխ, յա՛մ՝ հեռի հ՝ուրնե, էշ է։

Մարդ կիմնա, կէլնի, զինք կդնե կռու տեխ, կասե.—Բարև՛ ձի, ախպըրտանք։

Քառսուն ախպեր լէ մեկ բերան կասին.—Վո՞ւյ, աստծու բարին, բարով իս էկի դու, դու ի՞նչ մարդ իս։

Տղեն կասե.—Ես լէ ձըր պես թաքխանա իմ, ասի՝ էրթամ էդա տեխրանք, քանիմ՝ ընկեր գտնամ ընծի, մնաք էնդին ու էլ չի գանք։ Ձըք էնի՞ ղիս ձըղիկ ախպեր. օր էնիք, էդա տեխեն տեխ չըմ էրթա։

Քառասուն ախպեր ռիրդան կվերցուն կասին.—Հ՚որի՞ չընք գնի։

Էրին ուրանց ախպեր. ցերեկ կէրթեն ավ ու խուշի ու գողուութենի, հ՚իրկուն կիգեն ուրանց տուն, պառկեն քնեն։

Թե էդ քառասուն ախպերն է, մեկ քարվան կթալնեն, տղեն տըսվերկու կթալներ։ Ախպըրտանք զէդ օր տեսան, ասին.—Հըմալա չէղնի, էդա տղեն օր չկորցունք, օրըմ փորձանքըմ կբերե մըր գլուխ։

Իմա՞լ կորցունք, իմա՞լ չկորցունք, մեկն էնդիեն թռավ, ասեց. —Ճամփինք էրթա էնա ախչկա բաղնեք, բալքիմ՝ չիգա, փրթնինք ազատինք։

Հ՚էլան հ՚իրարու մեջ խոսքեր ուրանց մեկ էրին, ասին.—Մինե որն օր տանե զէգա էրկրթե սրկթեն զարկի ֆըլան ախչկա բաղնից մեջ, մարամ գռան մեջն ու հ՚իգա, կէնինք մղիկ մեծ ախպեր, մենք կէղնինք ուրին պզտիկ ախպեր։

Տղեն ասեց.—Տվե՛ք, ես կէրթամ,—առավ զէդ էրկրթե սրկթեն ու հ՚էլավ գնաց, դրեց վըր մարմար գռան զարկեց, գնաց ներս. օր գնաց ներս, ախչիկըմ հ՚էլավ թարանճի վրեն կանավ։ Ասեց.—Տղա՛, արի հ՚ոդա, բան կասիմ քզիկ։

Տղեն օր հ՚էլավ զնաց, էնեց աքցիմ՝ իդեր տղի սրտի գդալ, զօտքն օր բերեց, տղեն թալեց զօտք բռնեց, խալխալ մնաց տղի ձեռաց մեջ, ախչիկն էղավ եղըվնիկն, թռավ գնաց։

Դարձավ գնաց ախպըրտոց ասեց.—Զարկեցի ու էկա։

Ախպըրտանք ասին.—Դու էղար մըղիկ մեծ, մինք՝ քըզիկ պըզտիկ։

Ավուրըմ մեկ գողութենի չգացած են, փարա չկեր օր հաց առնեն։ Տղենն ախպըրտոց ասեց.—Ախպըրտա՞նք, առեք տարեք զէգա խալխալ շուկեն ծախեք, զփարեն բերեք, հաց առնինք ուտինք, հար տեսնանք իմալ կէղնի։

Ախպըրտանք առան գացին խալխալ շուկի մեջ կօլըրցուցնեն, չըմ գինա որ սըլտրկից, էկան խարախոլներ բռնին առան գացին։ Ասին.—Էդի թագավորի կնկան է, գողեր իս առի գացի, էդոր թայըմ լէ կա։

Բռնին զքառասուն ախպերն, տարան հաբս էրին։

Տղեն էկավ ասեց.—Ջանը՛մ, ես ֆըլան դիեն իմ բերի,—ո՞ր անկաճ կէնե։

Ասին.—Ձքզիկ լէ կրոնիք, քու ախպըրտոց հետ կախինք, օր չէրթաս զմեկել թայ առնիս հ՚իգաս։

Տղենն ասեց.—Դուք ձըր աստված, ձըր քառսուն օր մոֆուլ տվեք, էրթամ առնիմ զէդոր թայ, հ՚իգամ։

Քառսուն օր մոֆուլ տվին տղին, օր էրթա զէդ խալխալի թայ առնե հ՚իգա. օր քառսուն օր թըմավ, չբերե՝ զքառսուն ախպեր լէ պիտի կախին։

Տղեն հ՚էլավ հ՚ընկավ ճամբախ, գնաց։ Շատ գնաց, քիչ գնաց, քաղաքըմ տեսավ, օր էդ քաղքի մարդիկ հ՚ըմեն սև հալավ են հագի, ուր հալավ մինակ սպիտակ է. էնդիեն մարդըմ էկավ, ասեց.—Ախպե՛ր, չըս դինա՞ օր մըր թագավորի տղեն մեռեր է, մենք հ՚ըմենքսի սև ինք հագի, հ՚որի՞ զքու հալվնիր չըս փոխի։

Տղեն կհարցու, կասե.—Հ՚ո՞ւր է ուր գերեզման։

Կասին.—Ֆըլան տեխն է։

Կիգա գերեզմներուց քիչըմ հեռուն նստի ու կիշքե ու կդնե ուրին բրդուճըմ հաց կուտե։ Մեկ լէ տեսավ օր ախչիկըմ էկավ վարոցըմ զարկեց էդ դերեզմնին, գերեզման բացվավ, հանեց մեռելըմ դրեց գերեզմնի պռուկ, հոտըմ տվեց քիթ, մեռել սաղցավ հ՚էլավ ու ռազեց էդ ախչկա հետ իտալ ու առնուլ։

Տղեն գողտուտիկըմ հ՚ետևանց կիգա կթալե զէդ ախչկա օտք, կբռնե, կվերու կդնե գետին, զուր մեջք ուր փորուց կակուղ կէնի։

Ախչիկն կասե.—Տղա՛, քու բախտն իմ հ՚ընկի, թող զիմ օտք, զիմ անկաճ բռնե։

Տղեն զօտք օր կթողե, կթալե կբռնե զանկաճ, ախչիկ կթողե անկրճի օղ տղի ձեռքն ու կէղնի եղբվնիկըմ, կթռնի կէրթա։

Տղեն կէլնի կվերցու զէդ թագավորի տղեն ու կդառնա կիգա քաղաք։ Կասե.—Էդա ձըր տղեն։

Թագավոր կասե.—Տղա հ՚ուզե՝ իտամ։

Տղեն կասի.—Ի՞նչ հ՚ուզիմ, բան չըմ հ՚ուզի. քինե կուզիմ օր զէդա խալխալի թայ իտաս ընծիկ, թողիմ էրթամ։

Թագավոր ինչ խըտար ուր հ՚էրկրի մեջ օսկերիչ կա, կկանչե, կբերե։ Կասե.—Էդա հըմլա խալխալըմ ձինե կուզիմ։

Օսկերչիք կէրթան, կզարկին, կզարկվին, հոգի ուրանց կհանին, չըն կառնա շինի։

Թագավորն կկանչե զէդ տղեն։

Կասե.—Տղա, լաո՛, էղա խալխալի վրեն նը՛ կռան է առի, նը՛ խալամ, մարդու բերնին չընկեր է հըմլա բան շինի։ Հ՚ուզե՝ քզիկ ուրիշ բան իտամ։

Տղեն կասե.—Թագավոր ապրած, դու ողջ մնաս, ես փարի մուխթաճ չիմ, ընծիկ էդա խալխալի թայն է պետք, չկա՝ բան լէ չըմ առնի, կթողիմ կէրթամ իմ ճամբու հետ։

Կէլնի լուսուն բարիմնաց կէղնի ու կընկնի ճամբախ, կէրթա։ Կէրթա, կտեսնա օր ծովու մը պռուկ կյամիմ՝ կա կապուկ, մարդիկ հ՚ըմեն թափուկ ին էդոր բոլոր, մարդ չհ՚իշխնա հ՚էլնի մտնի մեջ, որն օր հ՚էլնի մտնի մեջ, բաթմիշ կէղնի։ Կէլնի կմտնի մեջ, կբռռան չորս դիեն. «Տղա, դու ու քու աստված, հ՚էլի, հըմկա էդ կյամին բաթմիշ կէղնի»։

Անկաճ չէնե, կասե.—Բաթմիշ կէղնի, ես կխեզդվիմ ձըզի՞կ ինչ։

Կտեսնա օր ախչիկըմ հ՚էլավ ու չափալանմիշ կէղնի, օր զէդ կյամին ջրջե, կթալե զձեռքն ու զէդ ախչիկ կբռնե, կվերցու, կզարկե դետին ու կհեծնի փորուն, զմեջք փորուց կակուղ կէնե։

Ախչիկն կասե.—Կտրիճ, քու արևուն խուրբան էղնիմ, իմ մեջք կոարավ, թող զիս, զիմ քիթ բոնե, ինչ օր գինաս էրե, քու քեֆն է։

Տղեն կթորկե, կբռնե զախչկա քիթ։ Օր զախչկա քիթ կբռնե, ախչիկ կթողե ղխզմեն տզի ձեռաց մեջ, կէղնի եղբվնիկըմ ու կփախնի կէրթա։

Տղեն է, էդ տեխըմ զկյամին կթորկե։ Թե իրեք, թե չորս ավուր մեջ ասիմ, կէրթա Իստանպոլա քաղքի պես քաղաքըմ կէլնի դուրս։

«Հ՚ո՞ւր էրթամ, հ՚ո՞ւր չէրթամ, մսաֆըր էղնիմ,—կասե,—վալալի, պիտի էրթամ էդա սար, հ՚էլնիմ ծառ, լուսնա հ՚էլնիմ հ՚իգամ»։

Հ՚էլավ ու հ՚ընկավ սարեր, գնաց տեխըմ մթնեց, էդ տեխ ծառըմ կեր, հ՚էլավ ծառու գլուխ, պառկավ քնավ. օր պառկավ քնավ, կես գիշեր էղավ, տեսավ օր ախչիկըմ էկավ էդ ծառու տակ, վարոցըմ զարկեց գետին, բացվավ, իրեք ախչիկ հ՚էլան դուրս, իրեք ֆընճան խահվա ուրանց հ՚առեջ, իրեք ջըղարա վըր ուրանց մըռթին, իրեք աման եմակ էլ ուրանց հ՚առեջ։ Կերան ղուրանց հաց, խմեցին ղուրանց խահվեն, քաշեցին ղուրանց ջըղարեք, հ՚էլան գացին, մեկ լէ ծակ էկավ հ՚իրար։

Հ՚իջավ ծառուց, ասեց.—Հ՚որի՞ն էդա վարոց լէ հըմալ վարոցըմ չէ, էն վարոցն էր օր ախչիկ զարկեց դերեզմնին՝ բացվավ,

տղեն հանեց, դրեց գերեզմնի թմբին, զվարոց թողեր էր էնտեխ ու փախի։

Զարկեց գետին, տեսավ օր դուրմ բացվավ, հ՚իջավ գնաց ներս։

Տեսավ օր իրեք լանկառի փըլավ կա էդտեխ դրուկ։ Ամեկուց քիչըմ կերավ ու գնաց մտավ մուսանդարի հ՚ետև։

Հ՚իրկվան բըդել էղավ, տեսավ օր իրեք եղըվնիկ թռան էկան նստան վըր չաքմաճին, էղան մեկ-մեկ ախչիկ, էկան նստան։ Ախչիկըմ լէ կեր խըզմաթ կէներ էդոնց։

Հ՚իրկուն օր էղավ, էկան նստան հաց կերան խըլըսան, մեծ քուր վերուց ասեց.—Ամեկ մարդ զուր գլխու գալածն թըղ պատմե, քանիմ՚ սահաթ հ՚ընցունք, հ՚էլնինք պառկինք քնինք։ Հ՚առջին հեղ ես կասիմ։

Առավ մեծ քուրն, ասեց.—Ես ֆըլան հ՚էրկիր բաղնեքըմ ենք դամնի, տղամարդ չհ՚իշխըներ մտներ մեջ, զանուն լէ դրած են ախչկա բաղնեք։ Ավուրըմ մեկ, տեսնամ օր տղեմ՚ էկավ, էրկըթե սըքթեմ ձեռք, դրեց վըր մարմար քարի գռան, ձեռքով զարկեց, սըքթեն հար կես գնաց գռան մեջ։ Հ՚էլավ օր կէրթեր, ասի. «Տղա՛, արի հ՚ոդա, բանըմ կասիմ», ես լէ կանուկ ենք վըր թարանջին։ Տղեն հ՚էլավ օր էկավ, էրեցի աքցիմ՚, էդոր սիրտ զարկենք, իտենք թարանջից ցած։ Տղեն թալեց զիմ օտք բռնեց, զիմ օտաց խալխալն թողի ուր ձեռաց մեջ, զօտքս սըլըցուցի հանի, էղա եղըվնիկըմ ու թռա էկա։

Զէդա խահվեն կխմիմ էն տղի կենաց։

Տղեն կլսե ինչ օր կխոսան։

Մեծ ախչիկն օր զուր գլխու գալած խըլըսցուց, միջինեկ ախչիկն առավ ասեց.—Ես լէ թագավորիմ՚ տղա ենք դամնի, մեռցուցեր ենք, դատեր ենք, գերեզմներ պահի։ Օրական կէրթենք վարոցովըմ կզարկենք վըր էդ գերեզմնին, գերեզման կրացվեր, կհանենք զմեռել դնեք գերեզմնի թմբի վրեն, հոդըմ կիտենք քթին, կէլներ կնստեր, զմըր քեֆ կէնեք, մեկ լէ հոդըմ կիտենք քթին, կմեռներ, կվերցենք, դնենք գերեզմնի մեջ, վարոցով կզարկենք գերեզմնին, կիգեր հ՚իրար, կէլնեք կէրթենք։ Ավուրըմ մեկ լէ գացի օր զէդ տղեն հանենք։ Վարոց զարկի գերեզմնին, բացվավ, հանեցի զմեռել դրի գերեզմնի փլի վրեն, հոտ տվի քթին, սաղցավ հ՚էլավ։ Էդ էր փաթվանք հ՚իրար զմըր քեֆ կէնեք, մեկ լէ տեսնամ, բարաթգիթ տղեմ՚ թալեց ղձեռք զիմ օտք բռնեց, հըմալ ճըխտեց օր

ճիդարս մրմռաց։ Վերցուց զիս զարկեց գետին, զիմ մեջք հրմալ էրեց, իմ փորուց կակուղ։ Ասի. «Տղա՛, տղա՛, խուրբան էղնիմ քղիկ, իմ վրեն հալ չմնաց, թող զիս, զիմ անկաճ բռնեմ»։ Վալայի, տղեն անկաճ էրեց. օր թողեց զիս, բռնեց զանկաճս, զօղս թողի ձեռքի մեջ, քաշեցի զանկաճս բոռթի, չըք ավտրնա, էդա լէ իմ անկաճ, էղա եղրվնեկըմ, թոա էկա։ Ես լէ ղէդա ֆրնճան խահվեն կխմիմ էն տղի կենաց։

Ըստհաղ առավ պղտիկ ախչիկն ասեց.—Ես լէ կյամիմ ենք դամնի, հրմալ օր որն օր հ'ելավ մտավ էդ կյամու մեջ, վերցի ու շրջեցի, վերցի ու շրջեցի, հարքյասի ճար կտրավ, նը՛ մարդ կէրթեր, նը՛ կիդեր։ Ավուրըմ մեկ լէ տեսնամ տղեմ՝ էկավ հ'էլավ մըտավ էդ կյամու մեջ. հուր ու հաշամ կեր թափուկ էդ կյամու բոլոր։ Ասին. «Տղա՛, դու ու քու աստված, մ'էլնի մտնի էդ կյամին, բաթմիշ կէղնի, կխեղդվիս, խեղճ ես, շահել իս»։ Տղեն ասեց. «Կխեղդվիմ, ես կխեղդվիմ, ձզի՞կ ինչ»։ Հ'էլավ մտավ կյամին։ Հ'էլա օր շրջենք զկյամին, զձեռք թալեց, վերցուց զիս դրեց ուր տակ, ի՞նչ ասիմ, զիմ փոր իմ միջաց մոտեն կակուխ էրեց։ Նաֆասս չէլներ, ասի. «Կտրիճ, քու դլխուն ու արևուն մեռնիմ, թող զիս հ'էլնիմ նստիմ, զքիթս բռնեմ»։ Վալայի աղեկ էր, թողեց, հ'էլա նստա. օր հ'էլա նստա, իմալ էղավ, զգլուխս թոթվեցի, քիթս խղդավ, խզմես մնաց տղի ձեռքի մեջ, էղա եղրվնեկըմ, փախա էկա։ Ես լէ ղէդա ֆրնջան խահվեն կխմեմ էն տղի օզուրին։

Օր հրմալ ասեց, տղեն բացեց զդոլբի դուռն, հ'էլավ էկավ։ Ասեց.—Էդա տղեն լէ խուրբան կէղնի ձզիկ։

Փաթվան հ'իրար, գրկեցին զիրար պառկան. հ'էլան լուսուն, տղեն ասեց.—Գինա՞ք, ես էկեր իմ օր էդա խալխալի թայն իդաք, ստնիմ էրթամ։ Էն խալխալի թայն օր քու օտքն էր,—ասեց մեծ քուրոջ,—մնաց իմ ձեռք, դու թոար էկար, օրըմ տվի իմ ախպըրտանք տարան քաղաք օր ծախեն, հ'էլան սուտ տեր։ Էկան խարախոլներ, բռնեցին, ասին. «Էգի թաղավորի կնկան է»։

Ասի՝ ջանըմ էդ իմն է, անկաճ չէրին։ Ասին. «Ցամ՝ զմեկել թայ լէ կբերես, յամ՝ զքու քառսուն ախպեր լէ կկախինք»։ Հրմկա քառսուն օր մոֆուլ իմ առի օր հ'իդամ զէդ խալխալ գտնամ, առնիմ էրթամ։

Հ'իրարու հետ խավլ ու խրատ էրին, օր էրթա ու դառնա հ'իդա. մեծ քուրն հանեց զմեկել թայն լէ տվեց։ Ասեց.—Դը՛, առ ու զնա։

Տղեն առավ ու հ'ընկավ ճամբախ։

Շատ էկավ, քիչ էկավ, աստված գինա, մինակ էկավ դաշտիմ' մեջ։

Ասեց. «էդա քառսուն օր է, քուն իմ աչք չմտեր է, քիչըմ էդա տեխ պառկիմ քնիմ, հալբաթ քոռըմ, քաշալըմ հ'ըռաստ կիգա, կառնե ուր օտներ, կէլնիմ էրթամ»։

Պառկավ բեխամ-բեխամ քնավ։

Քոռըմ էնդիեն էկավ, առավ ուր օտներ, հ'իմցավ, հ'էլավ։

Ասեց.—Դու քո՞ռ ըր, քզիկ աչք ու լուս կա, իշքե քու հ'առեջ քիլե։

Ասեց.—Քոռ դու իս, քու ախպըրտանք տարան կկախին, դու էկեր իս էդա տեխ պառկի բեխամ քնի։

Օր քոռն հ'ըմալ ասեց, հ'էլավ էդ տեխեն վազեց, լերդթման էկավ գնաց թագավորի դիվան, դրեց թագավորի հ'առեջ, ասեց.— Ջքու հ'ուզած խալխալի թայ բերի, հ'ո՞ւր ին իմ ախպըրտանք։

Ասին.—Դատեր ին, կկախեն, հըմա օր էդա գահ էլ չիգեր, կկախեն խըլըսեն։ Նոր ճամբեց թագավոր առավ էկավ։

Ասեց.—Դը՛, գացեք ձզիկ ապրեք, ես լէ ընծիկ կէրթամ ապ-րիմ, էդ տեխ թորկեց զքառասուն ախպերն, էկավ զիրեք հուրի փարին գտավ, առավ ու նստավ։

Աստծուց հ'իջավ իրեք խնձոր. մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լէ՝ անկաճ էնողին։